ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

N 2997-Ա

31 հոկտեմբերի 2025թ.

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմանների չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| **ՏԿԵՆ-** | 1 | *Մ-6,* | 345 | «ԳԵՐԱ | 029 | ՀՀ, ք. | 21.10. | ՀՀ | Ղեկավարվելով | ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ- |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բ-2025/36Փ | | *Վանաձոր (Մ-3 հայմանկետ) – Ալավերդի - ՀՀ սահման (Բագրատաշեն) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ67+050 – կմ67+220 փլուզված հատվածի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ* | 000 | » ՍՊԸ | 25161 | Երևան, Աբովյան պ. /2.17/ բն.21 | 2025թ. | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի պահանջներով՝ գնումների ընթացակարգերին՝ մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը իրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է | 2025/36Փ ծածկագրով գնահատող հանձնողովը ուսումնասիրելով «ԳԵՐԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 17.10.2025թ արձանագրել է, որ ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում են Հրավերի 2-րդ մասի 2-րդ կետով պահանջված Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության լիցենզիայի անբաժանելի մաս կազմող ներդիրը և ներդիրում ներառված մասնագետի հավաստագիրը: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին ծանուցումը ստանալու օրվանից մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: 21.10.2025 թվականին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակցի կողմից հրավերով սահմանված ժամկետում չեն շտկվել |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | պայմանագիր կնքելու իրավունքը։ ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 32-րդ կետի 19-րդ ենթակետի պահանջներով /այն է եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ներառյալ այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում/ և 42-րդ կետի պահանջներով, /այն է՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար։ Հակառակ դեպքում տվյալ մասնակցի | արձանագրված անհամապատասխանությունները։ Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝ «ԳԵՐԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով։ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է: | |

10/31/2025

X

ԱՐԹՈՒՐ ԵՐԻՑՅԱՆ

Signed by: YERITSYAN ARTUR 1609770064

Ստորագրություն

Ա. Երիցյան